ՓՈՒՆՋ

Գնչուհի բաժանորդ ընդունվում է միայն Մեհմետ դիտի քաղաքի փողոցներում 100 թուղթ հասցեագրելու համար, իսկ գյուղացուն՝ 50 թուղթ համար, իսկ գյուղացուն՝ մեկ 50 թուղթ համար, իսկ գյուղացուն՝ 100 թուղթ համար, իսկ գյուղացուն՝ 100 թուղթ համար, իսկ գյուղացուն՝ 100 թուղթ համար։ — Տարեկան 12 միայն երկու արծաթ Մեհմետ, եւ հատը 40 փող։

ՕՐԱԳԻՐ

10 վիսրայ

Տարեցման նոցը 40 փող է մեկ անգամի համար. իսկ ամիսը՝ 1 մանեթ։ Օրագրիս վերաբերեալ գրություններ դիտը է ուղղել առ Տիօրհան Վ. Պօղոս Մանուկեան փաշա Քիւրթճի խան ջարի շարկ թիւ. 26 Հաշտեանի Տպարան։

ԹԻՒ 30 ՉՈՐԵՔՇԱԲԹԻ 5 ՅՈՒԼԻՍ 1872

ԱԶԳԱՅԻՆ

Վանայ համար ամեն օր նորանոր տրնօրինութիւններ և հրամաններ կընէ Պատրիարքը։ Գարեգին վարդապետին՝ զոր վերջին անգամ Պատրիարքական փոխանորդ անուանած էր, հեռագրով հրամայեր է որ երթայ Վանէն և Մուշ երթայ։ Այս հրամանն ըրած ըլալու է, անշուշտ մտածելով թէ ասկէց յառաջ եղած որոշման դէմ և ապօրինաւորութիւն է՝ Սահմանադրութեան գործադրութեան համար վան դրկուած վարդապետի մի խօսքով վանայ Պատրիարքական բազմաժամանակեայ փոխանորդն յանկարծ պաշտօնէն ձգել և անոր տեղ հաստատել Սահմանադրութեան գործադրիչն։

Ահա այսպիսի ապօրինաւոր տնօրինութիւնք են, որ շատ անգամ մեր գաւառացի ազգայնոց յուզման և երկար ժամանակ նոյն վիճակին մէջ մնալուն և բազմադիմի վնասուց պատճառ կլինին։

Հեռագիրներէ և նամակներէ դատով կիմանանք, որ վանայ բոլոր վիճակը տակն ի վերայ եղած է, և ամենամեծ մասը՝ Սահմանադրութեան ճշդիւ գործադրութիւնը, և Պօղոս վարդապետի ըստ օրինի վերահաստատութիւնը կպահանջեն։

Զաղարոսեան մեծապատիւ հրխատոտուր էֆենտին այս առաւօտ նամակ մի յանձնեց մեզ՝ առ ի հրատարակել։

Իմաստը սա է, թէ ինքը այս օրերս ալ թէ երկար այլ և կարճ ճամբորդութիւն մ՚անգամ ընելու դիտաւորութիւն ունեցած չէ երբէք, և թէ՝ հետեւաբար սուտ է Մասիսի երկուան այն ծանօթութիւնը՝ զոր տուած էր Քաղաքական ժողովոյ միացեալ 10 անդամոց ընտրութեան համար կրկնապատիկ ցանկը հրատարակած առեներ, որով՝ այսինքն՝ երկար ճանապարհորդութիւն պիտի ընէ ըսելով՝ անշուշտ նպատակն էր երեսփոխան էֆենտիներուն քուէներուն վրայ աղդեցութիւն բանեցունել։

Բաբերդի (Պայպուրտ) վրայ հետեւեալ սրտաճմլիկ տեղեկութիւնները ըստացանք զոր համառօտելով կդնենք հոս։

Նախորդ յունիս ամսոյ 4 ին Բաբերդու Թումել գիւղէն որը աղջիկ մը տասիկ՝ երիտասարդի մը ձեռօք լեռը կը հանուի դիշերանց և հոն 10 օրի չափ պահուելէն վերջ, (կերեւայ թէ այս միջոցիս իրեն կրօնափոխութեան համար զրպմներ եղած են) կառավարութեան կը բերուի ըսելով թէ այս աղջիկը մահմետականութեան կդաղձայ. կառավար

Թիւնն ալ աղջկան (Թարգիւին) առնելով կարին կղրկէ, ուր աղջիկը մահմէտական-նութեան կրօնքն կրնդունի, ու կվերադառնայ Բաբերդ, ուր խումբ մը տաճիկ ժողովուած Թմբկօք և նուագարանօք զայն առաջը կ'ելլալով քաղաք կը մտցնեն. և քաղաքին փողոցները պըտըտցնելով մեծաս հանդիսիս, յիշեալ երիտասարդին կնութեան կուտան. և նա ալ աղջիկն կառնէ իւր գիւղը կը տանի: Քանի մ'օրէն յետոյ աղջիկն դղջալով իւր կրօնափոխութեան վրայ, առանց մէկու մը Թելադրութեան կանհետանայ՝ գիշերանոց վախչելով. լուսունք գիւղը իւր աղգականներէն մէկուն տունը:

Յունիս 15 ԷՀ. օր տաճիկ երիտասարդն Բաբերդ գալով Հօճայից լուր կը հաղորդէ Թէ Հայերը իմ կինս վախտըցին. ասոր վրայ տեղւոյն կառավարութեան դիմելուս՝ միևնոյն կանչել կուտան Թէ «Ով որ տաճիկ է խաչութիւնը գոցէ և Հայոց Թաղերը ժողվուի». այս միջոցին ճանբուն վրայ պատահող Հայոց վիճակը մակաբերել դիւրին է ընթերցողին: ոմանց ձեռքը սուր, և ոմանց ալ՝ գաւազան կոճղաւոր, և աղաղակ կբառնան Թէ կամ աղջիկ և կամ մահ. փախչող փախչողի կըլլայ՝ կամ ուսը և կամ ոտքը կոտրած. այսչափը բաւ չեն սեպեր և կսկսին մեծամեծներու տուներուն դուռները կոտրելով ներս մըտնել, մէջի գանուողներն դանակոծել, վիրաւորել, և ինչ որ անցնի ձեռքերնին՝ աւարել (եաղմայա վիրմէք): Հայոց առաջնորդարանն ալ կը կոխեն, և բաներադարձաբար Առաջնորդը հոն չեն գըտներ, և առաջնորդարան ժողվուող ազգ. մեծամեծները ներելով և տանջելով «աղջիկը կուզենք կպօռան»: Հոն գտնուողներէն և ոչ մին աղջկան վրայօք տեղեկութիւն մը չունենալնուն համար և զուր կդանակոծուին անխնայ. և առաջնորդարանի դոյքերէն 30,000 ղուրուշէն աւելի ինչք աւարի կուտան, դրական ինչ որ կայ հայհոյանօք կպատառեն ոտնակոխ կընեն. այս աւարառութեան մէջ է նաեւ Առաջնորդին խաչերն և գ. կարգի կայսերական շքանշանը: Հոն ձգելով կաղ և վիրաւորեալ հայերը, կելնեն դուրս և Հայոց չուխան կխոնեն, խանութները կկոտրատեն, դիմացնին եղնողին գոյքերը դրամները կյափշտակեն, որոց ամենուն գնասը 5000 լիրան կանցնի:

Ջմռնանք զրուցել որ տեղւոյն գայմագամը ամեն ճիգ կթափէ, աղջիկը ինձմէ ուզեցէք, կըսէ եւայլն. առաջքն առնելու համար, բայց ի զուր. ատոնք փոխանակ դիմանելու, հայհոյանօք կը պատասխանեն գայմագամին և «կեավուրլարը դըլըճտան կէչիրէճէկ յիշ» կը պօռան:

Հուսկ ուրեմն, 2000 ի չափ ղինեալ մարդիկ կյարձակին տեղւոյն երեւելիներէն Մարգարեաններու, Լրտեր Մանուկ աղային, Տ. Յովհաննէսեաններու և Մարգիս վարժապետի տունց վերայ. առնոց ինչքերը կյափշտակեն, և տան մէջ գանուողներն ալ կիսամահ Թողուլ դուրս կելնեն. ճամբուն վրայ հայազգի մէկուն կ'պատահին որ վաստայի ձի հեծած կը փախչէր, կյարձակին նորա վրայ ալ, կը գանակոծեն և պայուսակին մէջի եղածները կյափշտակեն որոց մէջ 150 ալ Օսմ: ոսկի կայ եղեր. այս միջոցին աղջիկն լուսունք գեղէն կը գանեն և Բաբերդ բերելով կառավարութեան կյանձնեն. յայտնի չէ Թէ աղջիկն ինչ պատասխանած է հոն. աղջիկն կհանեն անկէց և հրացաններ պարպելով, հանդիսիս և մեծ հրճուանօք իմամին տունը կը տանին. ասանկով խռովութիւնը կը հանդարտի, սակայն ոչ ոք կհամարձակի իր տունէն դուրս ելնել.

Այս գաւառի լուրը Գայմագամը փոստայով կարնոյ կուսակալին կ'հաղորդէ, և անմիջապէս վաշտ մը հեծելազօր ճամբայ կ'հանուի:

կարևոր գերը Ֆ Թարութիւնն սրբազան առաջնորդն , այս լուրերն ստանալուն պես ի խոր խոցուելով կարտասուէ և փութանակի տուրհանդակ մը ճամբայ կհանէ պետք եղած անհրաժեշտ թիւնները առնելու համար :

Այս Ծայրագոյն անհարգութեանց դէմ , ինչպես ամեն հայ նոյնպես մենք կ'բողոքենք և կ'ուսամք թէ բարեխոնամ կառավարութիւնը ամեն պետք եղած միջոցները անյապաղ ի գործ դնէ :

Այժմ կարևոր բարձրապատիւ կուսակալը մասնաժողով մի կազմեր է այս անցքերը քննելու համար , որոյ կանդամակցին մեր երեւելի ազգայիններէն Սարգիս և Թարաճեան Դանիէլ էֆէնտիներն :

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Բարձրապատիւ Խոիվը կիւրակէ օրը վսեմափայլ Նուպար փաշայի հետ Թարապիա ամերիկեան դեսպանին վոխադարձ այցելութեան գնաց :

— Մեծ կղզին բնակիչներէն հարուստ վաճառականի մը մարմինը անցեալ շարաթ օրը իր տանը հորէն հանուեր է : Այս օրերս ձախորդութեան պատահած լինելով կկարծուի թէ անձնասպանութեան մոտաբերած է :

— Թուռնուսի բոլոր բնակչաց թիւն է 2 միլիոն 500 հազար :

— Բուսանիոյ իշխանը լինքնագիր նամակ մի ղրկեր է Գարասաղի իշխանին , բայց պարունակութիւնը դեռ յայտնի չէ :

Պարսից կառավարութեան մեծ եպարքոսն Հրաժարեր է , յառաջադիմութեան թշնամի անձանց ընդդիմութեանց պատճառաւ : Շատ ուշ միայն չէ ընդուներ հրաժարականը , այլ և լիազօր արտօնութիւն առեր է ամեն բարեկարգութիւն ընելու համար :

— Պավիերայի թագաւորը մօտերս ստանձինն մակուկով դետի մը վրայ պըտուտած ատենը դիպուածով ջուրը լինկեր է , և քիչ մնացեր է որ խղդուի , եթէ մօտը գտնուող գիւղացիք օգնութեան չհասնին եղեր :

— Գաղղիայէն Գերմանիոյ անցած Ալզաս Լօրէնն և Մեց գաւառաց մէջ դըտնըուող գաղղիացիք սաստիկ վշտացեր են , տեսնելով որ փողոցներուն գաղղիական անուններըը գերմանական անուանց կը փոխուին :

— Գերմանիոյ գործարանաց բանուորներն յաճախ գործէ կդադրին , օրականնին վարձքերնին աւելցնելու համար : Ինչպես այս անգամ ալ ածխի հանքերը քանող գործաւորաց չատերը կատ քաշ ուեր են : Եթէ այսպես երթայ՝ հանքային ածուխով քանող գործարանաց չատերը պիտի գոցուին :

— Բէքինի (մայրաքաղաք չինաց) անգղիական դեսպանը փողոցին մէջ հասարակութենէն նախատուած լինելով , կայսեր բողոքեր և հատուցում պահանջեր է : Անմիջապես հրամայեր է որ յանցաւորները խստիւ պատժուին , և այսուհետեւ որ և է նախատինք չլինի օտարաց :

— Պրազիլիոյ կայսրութիւնը 24 միլիոն անգղիական լիրայի փոխառութիւն պիտի ընէ Անգղիայէն :

— Անցեալները վիէննայի մօտերը հետեւեալ անկարգութիւնը պատահեր է : 600 և չափ գործաւորք աղէկ մը գինովցնալով վիէննայի ճամբան մներ են : Ասոնց դէմ ոստիկանութեամբ մտնեն քաղաքը , բայց մտիկ չընելով կարմիր դրօշակները պարզեր , և կեցցէ Գօմիւն , կեցցէ Հասարակապետութիւն պոռացեր են յեղափոխական երգեր ի բերան : Ոստիկանու-

թեան պաշտօնակալ մի մեռեցնէր և ապ-դարարութիւն ըլլէր էլ՝որ հանդարտին, տակայն վոխանակ անսալու՝ անոր վրայ յարձակեր և դանակոծեր են։ այսր վըրայ ոստիկանութեան զինուորք հասնելով կռուի բռնուեր են, և երկու կողմանէ բազմաթիւ անձինք վիրաւորուելէն յետոյ՝ ապատամբ գործաւորաց 35 ը միայն բռնուեր են։

— Գահակորոյս Նաբոլէոնի կուսակիցներէն ոմանք ստակ ժողվեր են, նորա արձանը չլինել տալու, և առաջիկայ օգոստոս ամսոյ 3 ին՝ որ տարեդարձի օրն է, Անգղիա ղրկելու համար։

— Նախորդ ամսոյն 14 ին, Անգղիոյ հիւսիսային կողմը խիստ ուժգին փոթորիկ մի պատահելով, և քանի մ՚անդամ թաթաւ իջնելով շատ վնասուց և 13 մարդոց մահուան պատճառ եղեր է։

— Նախորդ ամսոյն 1 ին, Բորթուկալի մայրաքաղաքին Լիզպոնի մէջ մեծ հրդեհ պատահելով, ամբողջ թաղ մի մեխիր դարձեր է և քանի մ՚անձինք կեանքերնին կորսուեր են։ Նիւթական վնասը՝ 1 միլիոն 200 հազար անգղիական լիրա կհաշուեն։ Ասկէց 42 տարի յառաջ ալ մի և նոյն թաղին մէջ հրդեհ պատահեր և դարձեալ ամբողջապէս այրեր է։

ԾԱՆՈՒՑՄԱՒՆՔ

ԹՈՒԱԲԱՆՈՒԹԻՒՆ

ԱՇԽԱՏԱՍԻՐԵԱՑ Բ. Յ. ՏԻՐԿԷՐԵԱՆ
ՀԱՅՏՈՐ ԱՌԱՋԻՆ

1855

Այս Թուաբանութիւնը երեւելի և բազմահմուտ հեղինակներէ քաղուածոյք մի է, ինչպէս՝ կիլլէն, Պուրսօն, Սիրօտ, Լիոնէ և այլ և այլ հեղինակներ։ Այս Թուաբանութիւնը կը կարծուէր թէ սպառած է, բայց չափաւոր Թուով օրինակներ դեռ ևս կենալը արդյ դասատուաց խնդրնել պարտ անձին համարեցանք։

Կը ծախուի Գալաֆեան եղբարց քով, կազմեալի գինն 3 ղրուշ։

ԼՍԱՐԱՆ

ՀՈԳԵՇԱՀ ՊԱՏՄՈՒԹԵԱՆՑ

ԵՒ

ԽՐԱՏԱԿԱՆ ԲԱՆԻՑ ԵՒՍ ԵՒ

ՊԷՍ ՊԷՍ ԿԵՆՑԱՂՕՐՈՒՏ ԳԻՏԵԼԵԱՑ

ՏՊԵԱՒ Ի ԹԷՈԴՈՍԻԱ

Ի ՏՊԱՐԱՆԻ ԽԱԼԻՊԵԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆԻՆ

1868

Լսարան անուամբ 16 տետրերէ բաղկացեալ Աստուածաշնչի պատմութիւնք են, հատին գինը 20 փարայ։ դպրատան տղոց խիստ կարեւոր է։

Նաեւս կը վաճառուին նոյն դպրատան մէջ։

ՏՕՆ ԾՆՆԴԵԱՆ ԵՒ ՄԿՐՏՈՒԹԵԱՆ ՔՐԻՍՏՈՍԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՄԵԾԻՆ ՆԵՐՍԵՍԻ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ ՄԵՐՈՑ ԵՐԿՒՆՔ ԵՒ ԵՐԿՆՅԻՆ ՄԱՐՄԻՆՔ ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ԵԳԻՊՏՈՍԻ ՀՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ

Գին միոյ տետրի 2 դահեկան։

Այս տետրակները քիչ Թուով եկած ըլլալուն, ընթերցասէր անձինք եթէ յապաղին գնել, գուցէ ապառեալ ըլլան տետրերը։

Կը վաճառուի Գալաֆեան եղբարց քով ի Զաքմաքճըլար փողոց Թիւ 16։

ՆԱՐԵԿ ՄԵԾԱԴԻՐ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՐԱՄԵԱՆ

ՓԱՐԻԶ։

Գին մէկ քառորդ մէճիտիէ

ՏՆՕՐԻՆ ԵՒ ՏԻՐ
Հ. Ս. ԱԼԱՃԱՃԵԱՆ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ՅՈՎՍԵՓ ԳԱԼԱՖԵԱՆ
Ս. Փօշխա Քիւրջիի խան վարի յարկ Թիւ 26։